ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻՔ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ
SPECIAL TOPIC: THIS AGE AND THE AGE TO COME

ՀԿ-ի մարգարեները նայում էին ապագային որպես ներկայի երկարացված տևողություն: Նրանց համար ապագան կլինի այն ժամանակ, երբ աշխարհագրական Իսրայելը կվերականգնվի: Համենայն դեպս, նույնիսկ դա նրանք տեսնում էին որպես նոր օր (տես՝ Ես.65:17; 66:22): Աբրահամի սերունդների կողմից (անգամ գերությունից հետո էլ) Եհովայի շարունակ կամովի մերժված լինելը մի նոր հարացույց ձևավորեց հրեական միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ (այսինքն՝ 1 Ենովք, 4 Եզրաս, 2 Բարուք): Այս գրքերը սկսեցին զատորոշել երկու դարաշրջանները՝ ներկայիս չար դարաշրջանը, որտեղ տիրում է Սատանան և գալիք արդարության դարաշրջանը, որտեղ տիրում է Հոգին և մուտքը կատարել է Մեսիան (հաճախ որպես ուժեղ պատերազմող):

Աստվածաբանության այս դարում (էսկատոլոգիայի) ակնհայտ զարգացումներ կան: Աստվածաբանները սա անվանում են «առաջադեմ՝ պրոգրեսիվ հայտնություն»: ՆԿ-ը հաստատում է այս երկու դարաշրջանների նոր տիեզերական իրականությունը (այսինքն՝ ժամանակավոր երկբայությունը /դուալիզմ/):

Հիսուս	**Պողոս**	**Եբրայեցիներ**
Մատթեոս 12:32	Հռոմեացիս 12:2	1:2
Մարկոս 10:30	1 Կորնթացիս 1:20; 2:6,8;	6:5
Ղուկաս 16:8	3:18	11:3
Ղուկաս 18:30	2 Կորնթացիս 4:4	
Ղուկաս 20:34-35	Գաղատացիս 1:4	
	Եփեսացիս 1:21, 2:2,7, 6:12	
	1 Տիմոթեոս 6:17	
	2 Տիմոթեոս 4:10	
	Տիտոս 2:12	

ՆԿ-ի աստվածաբանության մեջ այս երկու հրեական դարաշրջանները մասնակիորեն համընկնում են Մեսիայի երկու գալուստների անսպասելի և անտեսված կանխատեսումների պատճառով: Հիսուսի մարմնացումը իրականացրեց նոր դարաշրջանի հանդիսավոր բացման մասին ՀԿ-ի մարգարեությունների մեծ մասը (Դան.2:44-45): Սակայն, ՀԿ-ը Նրա գալուստը տեսնում էր նաև որպես Դատավոր և Հաղթող, մինչդեռ Նա առաջին անգամ եկավ որպես Չարչարվող Ծառա՝ (տես՝ Եսայի 53; Զաք.12:10), խոնարհ ու հեզ (տես՝ Զաք.9:9): Նա վերադառնալու է իշխանությամբ, այնպես ինչպես ՀԿ-ում է կանխատեսված (տես՝ Հայտնություն 19): Երկու փուլով այսպիսի իրականացումը պատճառ հանդիսացավ, որ Թագավորությունը լինի ներկայում (հանդիսավոր կերպով բացված), սակայն ապագայում (դեռևս ոչ լիակատար): Սա ՆԿ-ի «արդեն», բայց «դեռ ոչ»-ի լարվածություն է: